ՍՐՈՐՈՑԻ ԵՐԳԵՐ

1 ՆԱՆԻԳ

Նանիդ, Նանիդ, օրոր բալաս,
Շուդ քուն էղիր, դեսոք դղաս,
Բեշիկդ նոր, դոշակդ չոր,
Քուն էղիր, բալաս, օրոր-օրոր։

Օրոր, բալաս, Նանիգ-Նանիդ,
Դեսքիդ մեռնի քու ձեր դադիկ։
Խաչ, համայիլ վիղեդ գախած,
Գաբուդ հիլուն վրադ գարած,
Ջար նաղարը դեշթա-կուկա,
Ոտրար դալու չկա սըրա։
Օրոր-օրոր, Նանիդ, Նանիգ,
Օրոր դասի քու ձեր դուգիկ։

Գաբռել հրեշտակ կլխուդ վրան,
Թուրը ձեռքը քեզ բահարան,
Ասվածամոր ձեռքը վերադ,
Աղոթք գանե չոքած մեծադ։
Օրոր-օրոր, Նանիդ-Նանիդ,
Օրոր գանե քու ձեր դադիկ։

Գարմիր գոճազով դանաչ գաբադ
Օսկի տերձանով գարից մամադ,
Գարմիր գոշիգ, դաբուգ կդագ,
Արձաթ կոդի պերից բաբադ։
Օրոր, բալաս, Նանիդ-Նանիդ,
Նախշիդ մեռնի քու ձեր դադիկ։

Թոոու ծին գարած առանը,
Արձըթե էդեռը գախած թավանը,
Ջենգուները օսկի ճրաձ,
Հուրփ Գարաբեդի հագիր արաձ։
Օրոր, բալաս, Նանիդ-Նանիդ,
Ուխտդ գադար, սիրուն թոռնիդ։

Շուդ մեծցիր ու բոյ քաշե.
Փսազդ որհնել մեծազ զուգե,
Քեզի կդիլ է դեսոք ախշիգ,
Մարը Լուսիգ, ինքը Աստխիգ։
Օրոր, բալաս, Նանիդ զղաս,
Քընի կնաց խելոք դղաս։

2 ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ[1]

Քուն եղիր. բալաս, աչքդ խուփ արա,
Նախշուն աչքերուդ քուն թող կա վրա.
Օրոր-օրոր, բալաս, օրոր ու Նանի.
Իմ Գարաբեդիս քունը զըղանի։

Օսկի խաչ վիզիդ քեզ բահարան,
Նարոտ գաբիլ է մարեն դեր-բաբան։
Օրոր-օրոր, բալաս, օրոր ու Նանի,
Իմ Գարաբեդիս քունը զըղանի։

Մազի հիլուններ գախիլ իմ ես ալ,
Նագար չիս առնուլ, քուն եղիր. մի լալ.
Օրոր-օրոր. բալաս, օրոր ու Նանի.
Իմ Գարաբեդիս քունը դըղանի։

Աս քանի մաշդ անքուն աչքովը
Անցիլ է օրոր օրորոցքիդ քովը։
Օրոր-օրոր, բալաս, օրոր ու Նանի,
Իմ Գարաբեդիս քունը զըղանի։

Օրորոցդ օրրիմ, օրով բոյ քաշիս,
Մըղգըռղան ծանով սիրդս չըմաշիս։
Օրոր-օրոր, բալաս. օրոր ու Նանի,
Իմ Գարաբեդիս քունը զըղանի։

Դուն ալ քուն էղիր. ինձի ալ բուն զուր
Սուփ Ասվածամար, Գարաբեդիս քուն զուր.
Օրոր-օրոր, բալաս, օրոր ու Նանի,
Իմ Գարաբեդիս անուշ բուն արի։

3

Օրոր-օրոր,
Թուշդ խնձոր,
Քունդ անուշ,
Իմ Հայդանուշ։

---

[1] Այս երգը, որպես Ռ. Պատկանյանի հեղինակություն, Գրիգոր Եալաթյանը մտցրել է Ռ. Պատկանյանի «Ընտիր երկասիրություններիս» մեջ։ Սա բուն ժողովրդական երգ է։ Տե՛ս Ռ. Պատկանյան, հատ. I, Պետերբուրգ. 1893, էջ 128։

Օրոր-օրոր,
Պերանդ գլոր,
Մեռնիմ նախշիդ,
Սև-սև աչքիդ։

Օրոր-օրոր,
Օրն վաշդևոր,
Համով-հոտով,
Վաշդ իս դեսքով։

Օրոր-օրոր,
Օր փառավոր,
Դուր ամեն օր,
Օրոր-օրոր։

4 ՄՈՐ ԵՐԳԸ

Ախչիդ ունիմ Հարսնացու,
Դդրիջ դուլիմ փեսացու։
(Երկու անդամ)
Որին դամ, որին չդամ,
Հանիմ, իշխանին դդին դամ,
Դասն արաբա ջըհեղ դամ
Ան չօկաներ դահա դամ,
Բդդի գլխուդ մեծ ֆես դամ,
Սըրմա մալիդ սանդըռ դամ,
Պարաղ մեչքիդ կոդի դամ
Բդդիկ ոդքիդ շիրլեթ դամ։

Ախչիդ ունիմ օղերով,
Հարս բիդ անիմ քոլերով.
Փեսա գուլիմ ըոբգ-նամուսով,
Ջրհեղ գուդամ փեշ-փեշտմալով։

Ախչիդ ունիմ հարսնացու,
Դդրիճ դուլիմ փեսացու։
Աղչիգ ունիմ օղերով,
Հարս բիդ անիմ քոլերով.
Դանանչ ֆառախ մոմերով,
Ցալդուր, յուլդուր խոլերով,
Ցալըն դանն ախչիդս,
Վեր-վեր դրյնի ախչիդս,
Որին դամ, որին չըդամ,
Դանիմ իշխանին դդին դամ,
Դասն տրարա ջըհեղ դամ.
Ան չօկաներ, դահա դամ.
Գլոր կլխուն ֆես ալ դամ
Սըրմա մալին սանդըռ դամ,
Պարակ մեչքին կոդի դամ,
Բըդդիկ ոդքին մաշիդ դամ,
Տուռն ու երթիկը վար դամ,
Դանիմ իշխանին դդին դաս,
Հարայդա. հարայդա. թող էրթա՞։
Գդրիջ ունիմ օղերով,
Հարս բիդ պերիմ քոլերով.
Բաբան գելնե մոմերով,
Մաման գելնե խոնգերով.
Խաս մորը, խաս հորը,
Աչը թաչը զընդան,
Դանդան, դանդան։

Դանդան-դանդան,
Էգիլ ին. դդիս ծան գուդան.
Գեցիք, կոդին թող դաբե,
Թուրը քովը թող դախե.
Պերնք դդիս չալ ծին,
Կդադ արից ալչին,
Սըրմայի խամչին,
Ջարնինք շուդով փախչի,
Սուի Դարաբեդ հասնի։

5 ՕՂԻՏԱՅԻՆ ԵՐԳԸ

Արի ախչիդս ինձի,
Դրլմանիս բուլիծի,
Թըռլ-թըռլ գրքալիս,
Փոոթակալի դրլմանիս։
Ախչիդս կնաց ավելի,
Դըլմաներ լալեի,
Օղիդս կնաց չուլկիի,
Դըլմաներ բուլկիի։
Երդու թուշդ թուզի բես,
Քու ջագադդ բուղի պես,
Օղիդիս վրան արձաթ զոչադ,
Ինքը մեքամ դեսոր շիշագ։
Օղիդս կնաց խոդ-օրախ,
Սիրդը շեն ու ուրախ,
Գլուխը աբիլ է շիշագն ֆես,
Գրցատկդն թոողայի բես։
Օղիդս գըխաղա օյին հավա,
Հալխը դայնած գըգարմանա.
Օղիդս գըխաղա խագախ հավա
Կեղինը դակը դըթնդա։
Օղիդս մեկ հատ բացված վաշդ,
Էրգանը հեդ բիդ արրև հաշտ։
Նանի, նանի, իմ բալաս,
Զրլիս, ձաղկիս, մեծանաս։

Այս Օղիտայի կամ Օղիկի երգը մենք լըսել ենք Թուիտի գյուղում և դրի ենք առել Զաքար Խաչիկյանի բերնից։

---

2 Այս երգի մի տարբերակը նոտագրված տե՛ս Մ. Լյուլեճյանի ժողովածուն։